ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով սեպտեմբեր ամսին

«**Ս. Սահակ – Ս. Մեսրոպ**» շքանշանով պարգեւատրուել է.
Հենրիկ Անասեանն (ԱՄՆ Արեւմտեան թեմ),

«**Ս. Ներսես Շնորհալի**» շքանշանով պարգեւատրուել են.
Պերճուհի Ճռնազեան - Էմիրեանը (Արգենտինայի թեմ),
Բաբկեն Սիմոնեանը (ԱՄՆ Արեւմտեան թեմ),

Օրհնութեան գիր է տրուել.
Սուսաննա Գոնտուրճեանին (Արգենտինայի թեմ),
Լուսածին Պալասանեանին (Արգենտինայի թեմ),
Իսապել Չալեանին (Արգենտինայի թեմ),
Սոսի Մակտեսեանին (ԱՄՆ Արեւմտեան թեմ),
Սուրբ Խաչ Եկեղեցուն (ԱՄՆ Արեւմտեան թեմ),
Ալեք եւ Մարի Մանուկեան վարժարանին (ԱՄՆ Արեւմտեան թեմ),

Լանջախաչ կրելու իրաւունք է տրուել.
Միքայէլ աբեղայ Գեւորգեանին (Սիւնեաց թեմ),
Մուշեղ քահանայ Խաչատրեանին (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ),
Մարկոս քահանայ Սարգսեան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ),
Առաքել քահանայ Ամիրեան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ),

ԵՀԽ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ ԺՆԵՒՈՒՄ

Օգոստոսի 26-ից սեպտեմբերի 2-ը Ժնեւում տեղի ունեցաւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի հանդիպումը, որին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ մասնակցում էին ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեի անդամ, ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու եւ ԱՄՆ Եկեղեցիների Ազգային խորհրդի ներկա նախագահ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը եւ գործադիր վարչության անդամ երեցկին Փոլա Դեւեջյանը, Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի աշխատակից Ցոլակ սարկավագ Հարությունյանը եւ օր. Արմինե Բաբաջանյանը (Կոտայքի թեմի Ջրվեժ համայնքի երիտասարդական միություն):

ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեի նիստի ընթացքում ԵՀԽ 7-րդ գլխավոր քարտուղար ընտրվեց Նորվեգական Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահ Լյութերական վերապատվելի դոկտոր Օլավ Թվեյթը: Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել ԵՀԽ նորընտիր գլխավոր քարտուղարին, որում ի մասնավորի ասվում է. «Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը ամենանշանավոր էկումենիկ կազմակերպությունն է՝ համագործակցություն, հանդուրժողականություն ու խաղաղություն խթանելու պարտականությամբ: Հայցում ենք Բարձրյալ Աստծուց, որ մեր Տիրոջ հավատքի, հույսի եւ սիրո պատգամի ու ուսմունքի ձեր վկայությամբ ԵՀԽ-ի առաքելությունը առավել աճի եւ զորանա»:

8-օրյա նիստերի ընթացքում Տ. Վիգեն արք. Այքազյանը մասնակցել է հասարակական հարցերով ենթահանձնաժողովի աշխատանքներին, իսկ երեցկին Փոլա Դեւեջյանը՝ թեկնածուներ առաջադրող ենթահանձնաժողովի նիստերին: Այս օրերին ԵՀԽ Կենտրոնական կոմիտեն տասը հայտարարություն է կատարել աշխարհում տարբեր արդիական մարտահրավերների առնչությամբ, որոնցից մեկը վերաբերում էր Ցեղասպանությունների մասին զեկույցին՝ Դարֆուրի ցեղասպանության համատեքստում:

Ժողովականներն անդրադարձել են նաեւ կառույցի վարչական եւ ծրագրային մի շարք հարցերի: Որոշվել է ԵՀԽ հաջորդ՝ 10–րդ համաժողովը անցկացնել 2013 թ. Հարավային Կորեայում, որի կազմակերպման կոմիտեում իբրեւ Հայոց Եկեղեցու ներկայացուցիչ ընտրվել է Վիգեն Սրբազանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՒԱՔ Ի ՊԱՏԻՒ ՏՈԼԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՄԵԹՐՈՓՈԼԻԹ ՃՈՆԱՅԻ

Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեան, Երեքշաբթի Սեպտեմբեր 8-ին, միջեկեղեցական հաւաք մը կազմակերպած էր ի պատիւ նոր նշանակուած Նիւ Եորքի Կաթողիկէ համայնքի առաջնորդ Տոլան արքեպիսկոպոսի եւ Ամերիկայի Ուղղափառ Եկեղեցւոյ նորընտիր առաջնորդ Մեթրոփոլիթ Ճոնա Փոֆիաուզընի:

Տոլան արքեպիսկոպոս, որպէս 10-րդ առաջնորդը Նիւ Եորքի կաթողիկէ համայնքի, իր պաշտօնին ձեռնարկեց Ապրիլ 15-ին, իսկ Մեթրոփոլիթ Ճոնա՝ 2008 տարուան Դեկտեմբեր 28-ին:

Այս հաւաքին մասնակցող Հռոմէական Կաթողիկէ, Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու ղեկավարները նախ այցելեցին Ս. Վարդան Մայր Տաճար, ուր կարճ արարողութիւն մը տեղի ունեցաւ Աստուածամօր՝ Սրբուհի Կոյս Մարիամի ծննդեան տօնին առիթով: Ապա բարձրաստիճան եկեղեցական հիւրերը մասնակցեցան միջեկեղեցական հաւաքի մը, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի համալիրին մէջ:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր խօսքին մէջ ըսաւ. «Երբ մենք կը դիմենք «Թէոթոքոս»ի,

Աստուածածնի, «Աուր Լէյտի»ի, «Պոկորոտիցա»յի, եւ կամ անոր բազմաթիւ անուններուն, մենք բոլորս ալ Ս. Մարիամ Աստուածածնին կը դիմենք որպէս սիրալիր Մայր մը: Դարեր շարունակ հին առաքելական քրիստոնեայ եկեղեցիներուն մէջ ա՛յս եղած է մեր խոր զգացումներն ու վկայութիւնը: Եւ իրապէս, Ս. Մարիամ Աստուածածնի մատուցած մեր հասարակաց պաշտամունքը մեզ կը վերածէ միացեալ ընտանիքի մը»:

Հաւաքի բացման խօսքը կատարեց Ամերիկայի Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ առաջնորդ Տէմէթրիոս արքեպիսկոպոսը, որ նախ շնորհակալութիւն յայտնեց Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանին՝ որ կազմակերպած էր այս հաւաքը եւ շնորհաւորեց Տոլան արքեպիսկոպոսն ու Մեթրոփոլիթ Ճոնան: Ան շեշտը դրաւ նաեւ Ս. Մարիամ Աստուածածնի հաւատքին ու դիմադրականութեան վրայ բոլոր տեսակի դժուարութիւններուն դիմաց. ինչպէս օրինակ Քրիստոսի ծննդեան առիթով տիրող անհիւրընկալ պայմանները, աքսորի մէջ իր ընտանիքով անցուցած տարիները, եւ տառապանքը իր զաւակին կեանքի վերջին տարիներուն ընթացքին: «Շատ մեծ տառապանքի մը յորձանքէն անցաւ ան: Սքանչելի օրինակ մը չարչարանքի եւ համբերութեան՝ ամէն տեսակի պարագաներու ընդմէջէն: Այսօրուան աշխարհի մէջ շատ կարեւոր դաս մը, երբ քրիստոնէական առաքինութիւնները յաճախակի յարձակումի կ'ենթարկուին»:

Տոլան արքեպիսկոպոս եւ Մեթրոփոլիթ Ճոնա արտայայտուեցան հին քրիստոնեայ եկեղեցիներու միջեւ տիրող ջերմ յարաբերութեանց մասին՝ Նիւ Եորքի եւ ընդհանրապէս Ամերիկայի տարածքին:

Տոլան Արքեպիսկոպոս ըսաւ. «Ես անդրադարձայ որ մեծագոյն Նիւ Եորքի այս համայնքը, ուր պատիւը ունինք հովուական առաքելութիւն կատարելու, արտացոլացումն է ընդհանրական եկեղեցւոյ: Կը տեսնեմ ամէն լեզու խօսող եւ տարբեր կրթութիւն ու աւանդութիւններ ունեցող անհատներ գեղեցկօրէն ներկայացուած են այս սրահին մէջ»:

«Ինծի համար շատ կարեւոր է որ մենք միացած ըլլանք երբ կը հոչակենք Յիսուս Քրիստոսի Աւետարանը»,- ըսաւ Մեթրոփոլիթ Ճոնան:

Խօսք առաւ նաեւ Առաջնորդարանի երկար տարիներու բարեկամ Կարտինալ Ուիլեըմ Քիլըը, որ այցելած է նաեւ Հայաստան:

Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան Տոլան արքեպիսկոպոսին եւ Մեթրոպոլիթ Ճոնային յուշանուէրներ յանձնեց: Իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի կողմէ լանջախաչ մը՝ Տոլան արքեպիսկոպոսին եւ պանակէ մը՝ Մեթրոփոլիթ Ճոնային:

Իսկ Հիսպանային Ամերիկայի Ղպտի Ուղղափառ արքեպիսկոպոսարանի Ընդանուր Եպիսկոպոս եւ Պատրիարքական էքսարք Տէյվիտ Եպիսկոպոս մեծարեալներուն յանձնեց սրբանկարներ:

Փակման աղօթքը արտասանեց Միացեալ Նահանգաց Արեւելեան շրջանի Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ առաջնորդ Մեթրոփոլիթ Մար Սիրիլ Աֆրամ Քարիմ, որ Աստուծմէ խնդրեց որ օրհնէ եւ առաջնորդէ Տոլան արքեպիսկոպոսն ու Մեթրոփոլիթ Ճոնան, եւ շնորհակալութիւն յայտնեց Տիրոջ՝ որ առիթը ընծայած էր հաւաքուելու եղբայրական սիրոյ մթնոլորտի մը մէջ»:

Ներկայ էին նաեւ՝ Միացեալ Ազգերու մօտ Վատիկանի մնայուն դիտորդ Սէլէսթին

արքեպիկոսպոս Միկլիոռէ, Նիւ Եօրքի (Նիւ Ճըրզի) Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցիէն Ճան արքեպիսկոպոս Մայըրզ, Ամերիկայի Եթովպական Ուղղափառ Եկեղեցիէն Զաքարիոս արքեպիսկոպոս, Միացեալ Նահանգաց Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ Էքսարք Մանուէլ եպիսկոպոս Պաթաքեան, ինչպէս նաեւ ներկայացուցիչներ Անտիոքեան , Ռուսական, Պուլկարական եւ Սերպեան Ուղղափառ Եկեղեցիներէն:

Այս հաւաքին մասին արտայայտուելով առաջնորդ Սրբազան Հայրը ըսաւ. «Սքանչելի եւ յուսաբեր նշան է որ այսպիսի եղբայրական հաւաքները յաճախակի կերպով տեղի կ'ունենան վերջին տարիներուն ընթացքին: Ի վերջոյ, մենք բոլորս ալ սերած ենք հին, առաքելական եկեղեցիներէ: Մենք բոլորս ալ կը ներկայացնենք «Հին Աշխարհ»ի աւանդութիւնները պատուաստուած Նորին մէջ»:

Առաջնորդարանին կողմէ ներկայ էին Գերշ. Տ. Եղիշէ արքեպս. Կիզիրեան, Թեմական Պատուիրակ եւ Ամերիկայի Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի նախագահ Գերշ. Տ. Վիգէն արքեպս. Այգազեան, առաջնորդի փոխանորդ Հոգշ. Տ. Հայկազուն Ծ. վրդ. Նաճարեան, Հոգշ. Տ. Սուրէն Ծ. վրդ. Չինչինեան, Ս. Վարդան Մայր տաճարի Լուսաբարապետ Արժ. Տ. Մարտիրոս քհնյ. Չեւեան եւ «Միշըն» Ծուխերու Յայտագիրի տնօրէն Արժ. Տ. Թադէոս քհնյ. Ապտալեան:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

17-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 9-12-ը Բոզեի վանքում (Իտալիա), տեղի ունեցաւ 17-րդ Միջազգային էկումենիկ համագումարը՝ «Հոգեւոր բախում ուղղափառ ավանդության շրջանակներում» թեմայով: Համագումարը կազմակերպվել էր Բոզեի վանքը Ուղղափառ Եկեղեցիների հետ համագործակցությամբ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցեց Արժանապատիվ Տ. Ադամ քահանա Մակարյանը, որը թեմայի շրջանակներում հանդես եկավ բանախոսությամբ եւ ընթերցեց Վեհափառ Հայրապետի ուղերձը համագումարի մասնակիցներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԲԱՑՎԵՑ ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Սեպտեմբերի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցաւ Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի 2009-2010 ուսումնական տարվա բացման արարո-

ղությունը, որին մասնակցում էին ճեմարանականները, Մայր Աթոռի միաբաններ, դասախոսներ ու ծնողներ:

Հանդիսությանը բացման խոսք ասաց Գեորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ Տ. Դավիթ աբեղա Քարամյանը՝ անդրադառնալով Ճեմարանի ընդհանուր վիճակագրությանը: Հայր Սուրբն ուրախությամբ նշեց, որ այս տարի Ճեմարան են ընդունվել 31 սաներ, համալրվել է տեսչական եւ դասախոսական կազմը: Ճեմարանում այժմ ուսանում են 123 սաներ:

Այնուհետեւ հոգեւոր եւ ժողովրդական երգերի կատարումներով եւ ասմունքով հանդես եկան ճեմարանականները:

Վերջում ներկաներին իր գնահատանքն ու օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը ուրախությամբ արձանագրեց, որ այժմ Ճեմարանը համալրվել է հոգեւորական դասախոսներով, որոնք իրենց ասպվածաբանական բարձրագույն ուսումն ավարտելով Եւրոպայի եւ Միացյալ Նահանգների տարբեր կրթական հաստատություններում, վերադարձել են Մայր Աթոռ եւ իրենց ծառայությունն են բերում Հայոց Եկեղեցուն եւ մասնավորապես Ճեմարանին:

Իր պատգամում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ եկեղեցականի կերպարին՝ ժողովրդին, Եկեղեցուն եւ Հայրենիքին հոգեւորականի արդյունավոր ծառայության մեջ կարեւոր նկատելով պատասխանատվությունը, նվիրումն ու բարոյական նկարագիրը: «**Այդ գաղափարները կարող են կյանքի կոչվել, երբ մենք ունենք սեր մեր կոչումի եւ ծառայության նկատմամբ եւ հավատ՝ տեսնելու մեր առաքելության ուղին, այն նպատակը, որին ձգտում ենք հասնել, որի իրականացման համար ջանք, եռանդ եւ նվիրում ենք գործադրում**»,- նշեց Վեհափառ Հայրապետն իր խոսքում՝ հորդորելով ճեմարանականներին առավել նախանձախնդրությամբ, հետեւողականությամբ եւ բարձր գիտակցությամբ լծվել ուսումնառության սրբազան գործին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ հուլիսի 19-ին ձեռնադրված նորաօծ քահանաները, ավարտելով իրենց քառասնօրյա պահեցողության շրջանը, հոգեւոր սպասավորության են նշանակվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր թեմերում:

Տ. Հակոբ աբեղա Սահակյանը, Տ. Մովսես քահանա Մանուկյանը եւ Տ. Տիգրան քահանա Մխիթարյանը ծառայության են կոչվել Վիրահայոց թեմում, Տ. Սարգիս աբեղա Այվազյանը եւ Տ. Թադեոս քահանա Բարսեղյանը՝ Կոտայքի թեմում, Տ. Վաչե աբեղա Մկրտչյանը եւ Տ. Ստեփանոս քահանա Իգնաթեւոսյանը՝ Գեղարքունյաց թեմում, Տ. Շահե քահանա Նազարյանը՝ Արագածոտնի թեմում, Տ. Հարություն քահանա Պետրոսյանը եւ Տ. Լեւոն քահանա Հովհաննիսյանը՝ Շիրակի թեմում, Տ. Բաբկեն քահանա Ստեփանյանը՝

Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, Տ. Հայկ քահանա Սահակյանը, Տ. Նիկողոս քին. Հովհաննիսյանը եւ Տ. Սահակ քահանա Ղարիբյանը՝ Արարատյան Հայրապետական թեմում, Տ. Գեւորգ քին. Միրզոյանը՝ Հարավային Ռուսաստանի Հայոց թեմում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԲԱՑՎԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ «ԷՕՌՆԵԿՅԱՆ» ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Սեպտեմբերի 12-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ազգային բարերար Էդուարդո Էօռնեկյանը կատարեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էօռնեկյան» հանրակրթական դպրոցի հանդիսավոր բացումը:

ՀՀ կառավարության օգոստոս 20-ի որոշմամբ Էջմիածնի թիվ 13 դպրոցը հանձնվել էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ վերակոչվել «Էօռնեկյան»՝ ի հիշատակ ազգային բարերար Էդուարդո Էօռնեկյանի հանգուցյալ ծնողներ Փանոս Էօռնեկյանի եւ Սուրբիհա Բագրատունու:

Վեհափառ Հայրապետին եւ պատվարժան հյուրերին մեծ խանդավառությամբ, բուռն ծափողջույններով եւ ավանդական աղ ու հացով դիմավորեցին դպրոցի սաներն ու ուսուցիչները:

Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը՝ անդրադառնալով պատմական այս իրադարձության կարեւորությանը, որով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին շարունակում է կրթական ասպարեզում դարավոր իր առաքելությունը: Հայր Սուրբն իր երախտագիտությունը հայտնեց հայրենի իշխանություններին՝ ցուցաբերած աջակցության համար, ինչպես նաեւ մեծանուն բարերարին, որի ազնիվ աջակցությամբ կգործի այս դպրոցը:

Դպրոցի տնօրեն Սահակ Զաքարյանի բարիգալստյան խոսքից հետո ներկաներին իրենց սրտի խոսքն ուղղեցին ՀՀ Մշակույթի նախարար Հրանուշ Հակոբյանը եւ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարի խորհրդական Մհեր Ղազարյանը:

Այնուհետեւ հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի կատարվեց դպրոցի օրհնության արարողությունը, որի ավարտին ներկաներին իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնության ներքո գործող կրթական այս հաստատությունից ներս դպրոցի սաները պիտի դաստիարակվեն ազգային արժեքներով եւ հայրենյաց սիրով, գինվեն անհրաժեշտ գիտելիքներով եւ հմտություններով, որպեսզի հաստատուն քայլեն կյանքում եւ իրենց բարի ծառայությունը բերեն ժողովրդին, Հայրենիքին եւ Եկեղեցուն: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց դպրոցի բարերար Էդուարդո Էօռնեկյանին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելության իրականացման գործում զորակցման համար: Նորին Սրբությունը մասնավոր իր գնահատանքը հայտնեց նաեւ Արմավիրի մարզպետին եւ ՀՀ Կրթության ու գիտության նախարարին:

«**Սիրելի՛ սաներ, վստահ ենք, որ նոր խանդավառությամբ պիտի ուսանեք այս հաստատության հարկի ներքո՝ գիտակցելով, որ դուք այլեւս բարի անվան պահպանողներն ենք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Վստահ ենք, որ գիտակցելով այն, որ դպրոցը գործում է Մայր Աթոռի օրհնության եւ հովանավորության ներքո, առավել նախանձախնդրությամբ պիտի կատարեք հանձնարարությունները մանկավարժների, սնեք ձեր հոգին մշտական հաղորդակցությամբ մեր հայրերի պատվիրանների ու պատգամների եւ ձեր կյանքը կազմակերպեք՝ առաջնորդվելով դրանցով**»,- նշեց Հայոց Հայրապետն իր խոսքում:

Վերջում Նորին Սրբությունը եւ բարերար Էդուարդո Էօռնեկյանը գրքեր նվիրեցին առաջին դասարանի սաներին, ապա արարողության մասնակիցները շրջեցին դպրոցում՝ ծանոթանալով պայմաններին:

Դպրոցի բացմանը ներկա էին Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը, ԱԺ պատգամավոր Անահիտ Բախշյանը, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամներ, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ եւ հյուրեր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Սեպտեմբերի 13-ին որբեւայրիների եւ աղքատների գթության քույր՝ Մայր Թերեզայի մահվան հիշատակի 12-րդ տարելիցին Կալկաթայում գտնվող նրա տուն-թանգարանում, որտեղ նաեւ նրա գերեզմանն է, կազմակերպվել էր «Մարդկության խաղաղությանը նվիրված» միջհարանվանական աղոթք, որին ներկա էին Կալկաթայի բոլոր կրոնական կազմակերպությունների եւ համայնքների առաջնորդներն ու ներկայացուցիչները:

Արարողությանը հրավիրված էր նաեւ հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ՝ Հոգեշնորհ Հայր Խորեն Հովհաննիսյանը՝ ընկերակցությամբ ճեմարանի վարչական տնօրեն Արժանապատիվ Տ. Ավետիս քհն. Համբարձումյանի:

Արարողության ընթացքում Հոգեշնորհ Հայր Սուրբը ելույթով հանդես եկավ՝ աղոթելով աշխարհի խաղաղության եւ Մայր Թերեզայի հոգու հանգստության համար՝ նշելով. «Վստահաբար այս պահին որբեւայրիների եւ աղքատների գթության քույր Մայր Թերեզան իր քաղցր հայացքով մեզ է նայում երկնքից եւ հանուն աշխարհի խաղաղության ուզում է որ մարդիկ սիրեն եւ հարգեն միմյանց»:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

«Հանդիպում» ադամների վերածնվելուց

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանն ազատվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահի պարտականություններից եւ ծառայության կոչվել Ֆրանսիայի հայոց թեմում: Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ է նշանակվել Տ. Մկրտիչ վարդապետ Պողոշյանը՝ ազատվելով Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի փոխտեսչի պարտականություններից:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մի շարք միաբաններ, ավարտելով իրենց բարձրագույն ուսումն արտերկրի տարբեր համալսարաններում, վերադարձել են Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ ծառայության կոչվել Մայր Աթոռի կառույցներում:

Տ. Շահե աբեղա Անանյանը (Փարիզի Կաթոլիկ համալսարան) աշխատանքի է նշանակվել «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում՝ իբրեւ գլխավոր խմբագրի տեղակալ: Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանը (Հռոմի Գրիգորյան համալսարան) սպասավորում է իբրեւ Մայր Աթոռի հրատարակչական բաժնի գրասենյակի վարիչ:

Տ. Զավեն աբեղա Յազիչյանը (Ս. Թոմասի համալսարան, ԱՄՆ) նշանակվել է Մայր Աթոռի ինտերնետային գրասենյակում՝ որպես Մայր Աթոռի համացանցային կայքէջի հայերեն բաժնի պատասխանատու: Տ. Տաճատ աբեղա Ծատուրյանը (Ջոն Քերոլ համալսարան, ԱՄՆ) նշանակվել է Սեւանի Վազգենյան դպրանոցի փոխտեսուչ: Տ. Տիրան աբեղա Պետրոսյանը (Վիեննայի համալսարան) ստանձնել է Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի փոխտեսչի պարտականությունները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՀԱՎԱՔ

Սեպտեմբերի 15-22-ը Հունաստանի Լերոս կղզում հրավիրվել էր 2011 թվականին Յամայկայում կայանալիք Խաղաղության միջազգային համագումարի նախապատրաստական հավաք, որի կազմակերպիչներն էին Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը եւ Կոստանդնուպոլսի Հույն Տիեզերական Պատրիարքությունը:

Հավաքին իբրեւ քննարկման նյութ ընտրված էին հետեւյալ թեմաները՝ «Խաղաղությունը սրտից ներս», «Խաղաղությունն ընտանիքում», «Խաղաղությունը վիրտուալ աշխարհում», «Խաղաղություն երկրի վրա՝ Խաղաղություն երկրի հետ» եւ այլն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այս հավաքին ներկայացնում էր Սեւանի Վազգենյան Հոգեւոր Դպրանոցի տեսուչ Տ. Գեւորգ աբեղա Սարոյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՒԼՅԱՆՈՎՍԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Սեպտեմբերի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Ուլյանովսկի նահանգապետ Սերգեյ Մորոզովին եւ նրա գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի եւ Շիրակի մարզպետ Լիդա Նանյանի:

Հանդիպմանը Նորին Սրբությանը ներկայացվեցին Ուլյանովսկի նահանգապետի այցի արդյունքները, ՀՀ Շիրակի մարզի եւ ՌԴ Ուլյանովսկի նահանգի միջեւ ձեւավորվող համագործակցությունը: Անդրադարձ կատարվեց Ուլյանովսկի նահանգի հայ համայնքի հոգեւոր-մշակութային կյանքին, տեղեկացվեց, որ առաջիկայում Ուլյանովսկում կսկսվեն հայկական եկեղեցու կառուցման աշխատանքները:

Զրույցի ընթացքում խոսվեց երկու ժողովուրդների եւ Եկեղեցիների միջեւ առկա եղբայրական հարաբերությունների, ինչպես նաեւ ժողովրդի կյանքում հոգեւոր-բարոյական արժեքների առավել ամրապնդման անհրաժեշտության մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ հուլիսի 19-ին ձեռնադրված մի շարք նորաօծ քահանաներ, ավարտելով իրենց քառասնօրյա պահեցողության շրջանը, ծառայության են կոչվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կառույցներում:

Տ. Վարդ քահանա Գյոզալյանը պաշտոնավարում է Վեհարանի ընդհանուր բաժնում, Տ. Առաքել քահանա Վարդազարյանը՝ Մայր Աթոռի Համացանցային կայքէջի սպասարկման գրասենյակում: Տ. Սեդրակ քահանա Ազնավուրյանը նշանակվել է Մայր Աթոռի հրատարակչական բաժին, ինչպես նաեւ Համազգային Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց կազմակերպության հոգեւոր պատասխանատու, եւ Տ. Հովհաննես քահանա Քեսաբլյանը նշանակվել է Մայր Տաճարի լուսարար եւ Սուրբ Վարդան եւ Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանի տեսուչ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՈՒՇ-ԵՐԵԿՈ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Սեպտեմբերի 19-ին Երեւանում՝ Արամ Խաչատրյանի ֆիլհարմոնիկ համերգասրահում, տեղի ունեցավ հուշ-երեկո եւ արխիվային լուսանկարների ցուցահանդես՝ նվիրված երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Հանդիսությունը սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո հիշատակի խոսքեր ասացին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

«**...Քրիստոնեական հավատքն ու ազգային ապրումը շաղախված էին երջանկահիշատակ Հայրապետի հոգում, որոնցով արդյունավորվում էին նրա ապրած օրն ու ժամը հոգեւոր ծառայության բոլոր հանգրվաններում՝ դպրանոցի տեսչություն, այնուհետեւ՝ առաջնորդություն եւ կաթողիկոսության տարիներ: ...Տասը տարիներ են անցել այն օրից, երբ Գարեգին Ա Կաթողիկոսը իր աչքերը փակեց համայն հայության հոգեւոր կենտրոնում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ անավարտ թողնելով իր բազում ծրագրերը: Այս տարիներին միշտ հաստատուն է մնացել հոգելույս Հայրապետի կերպարը մեր ժողովրդի զավակների սրտերում: Իր գործերով եւ վաստակով, կյանքի օրինակով Գարեգին Ա Կաթողիկոսը շարունակում է ապրել մեր ժողովրդի հիշողության մեջ եւ արժանի գնահատանքով պիտի հիշվի սերունդների կողմից: Պիտի հիշվի նաեւ նրա պատվիրանը՝ ազգային իղձերի իրականացման ճանապարհին. «Արթնացիր, զգօն դարձիր, ճշմարտութիւնն ու արդարութիւնը կրնան պահ մը լռեցուիլ, բայց երբէք՝ թաղուիլ»: ...Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ երանելի մեր Հայրապետների հիշատակը, նրանց հավատավոր կյանքի ուղին, գործն ու վաստակը քաջալերություն են բերում մեր հոգիներին, ոգեշնչում եւ ուսուցանում մեզ ապրելու առ Աստված սիրով, առ Հայրենիքն ու ազգս հայոց նվիրումով ու պատասխանատվությամբ: Թող լուսահոգի մեր հայրապետների երկնարնակ հոգիները բարեխոս լինեն եւ աղոթեն մեզ համար**», - նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

«...Մեծ հայ, հոգեւոր ու ազգային անհատականություն, մտավորական, հայ գրի ու մշակույթի ճշմարիտ նվիրյալ: Այդպիսին էր Վեհափառ Հայրապետը եւ նա կոչված էր այդպիսին լինել՝ դիմագրավելու համար հակասական ժամանակների գլոբալ մարտահրավերներին՝ հայապահպանություն, եկեղեցաշինություն, պայքար ազգային ինքնության ու արժեքների պաշտպանության առաջին դիրքերում, դիմակայություն հանուն հավատքի, հանուն հայ ժողովրդի հարատեւության, հանուն այն ամենի, ինչին նա անվերապահ հավատում ու անմնացորդ ծառայում էր: Պատմական ճակատագիրը Հայոց հայրապետներին միշտ բաժին է հանել բարդ ու փորձություններով իրավիճակներում գործելու առաքելություն, եւ նրանից ոչ մեկն իրենից չի վանել այդ պարտավորությունը: Գարեգին Առաջինը նույնպես անմնացորդ նվիրումով ծառայեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն», - մասնավորապես նշեց իր խոսքում ՀՀ վարչապետը:

Հանդիսության ընթացքում ցուցադրվեց «Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց» ֆիլմը:

Ապա Մ. Եկմալյանի, Ա. Պարթեյանի, Ալ. Հարությունյանի, Ջ. Հենդելի, Գ. Ֆոռեի, Դ. Շոստակովիչի, Ջ. Վերդիի ստեղծագործությունների կատարումներով հանդես եկան Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբը եւ Ազգային ակադեմիական երգչախումբը՝ խմբավարությամբ Հովհաննես Չեքիջյանի եւ Էդուարդ Թոփչյանի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀՎԱՆ 10-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

Սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան 10-րդ տարելիցի առիթով մատուցվեց Սուրբ եւ Անմահ Պատարագ: Պատարագիչն էր ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը:

Ս. Պատարագի ընթացքում Խաժակ Սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով երանաշնորհ Հայրապետի լուսավոր կերպարին եւ Հովվապետության տարիներին: «Պատմական իառն ժամանակներում Վեհափառ Հայրապետը պատասխանեց Աստծո կանչին՝ գալով հովվելու իր հոտը իբրեւ Ամենայն Հայոց Հայրապետ, եկավ իր ծառայությունը բերելու իր ժողովրդին: Լուծը ծանր էր, սակայն հիշելով Մովսեսի պատգամն ուղղված Հեսուին, թե՝ քա՛ջ եղիր, որովհետեւ Աստծո Հոգին քեզ հետ է, եկավ լինելու քաջ հովիվ: Ներշնչված Ս. Հոգով՝ շարունակեց հովվել իր հոտը, առաջնորդել դեպի Աղբյուրը Լույսի:

Համաշխարհային անձ է, համաշխարհային գիտակցություն եւ ներգործություն ունեցող անձ է Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Նա դարձավ խանդավառող ուժ տարբեր եկեղեցիների հավատացյալների համար, տարբեր ժողովուրդների համար: Այս պահին զգում ենք հոգեւոր ներկայությունը Գարեգին Ա հանգուցյալ Հայրապետի եւ զգում ենք, որ նա ուրախ եւ երջանիկ է, որ տեսնում է մեզ բոլորիս՝ աշխարհական, թե հոգեւորական, համախմբված իր արժանավոր հաջորդի՝ Գարեգին Բ Հայոց Հայրապետի շուրջը:

Վեհափառ Հայրապետն արձանագրեց իր կտակը, վերջին խոսքերը թղթի վրա, որ ուղղված են համայն հայությանը: Նրա պատգամին հետեւելով՝ շարունակենք սիրել Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որովհետեւ նրա հաջողությունը հաջողությունն է Քրիստոսի առաքելության մեր ազգի կյանքից ներս, եւ կատարելով նրա կտակը՝ պիտի կարողանանք իսկապես զգալ մեր միասնականությունը իբրեւ Եկեղեցի եւ ժողովուրդ, եւ հաղորդակցվելով իրար հետ՝ պիտի կարողանանք վայելել մեր ժողովրդի ավետյաց երկիրը՝ ազատ ու անկախ Հայաստանը», - ասաց Սրբազան Հայրը:

Հոգեհանգստի արարողություն

Հավարտ Ս. Պատարագի Գարեգին Ա Հայրապետի շիրիմի մոտ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Արարողությունից հետո Վեհարանում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց բոլոր ներկաներին, ովքեր Հայաստանի եւ Սփյուռքի տարբեր թեմերից ժամանել էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ իրենց աղոթքն ու խոնարհումը բերելու հոգելույս Հայոց Հայրապետի հիշատակին: Իրենց սրտի խոսքն ասացին նաեւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան Տ. Նորայր եպիսկոպոս Աշճյանը, Մայր Աթոռի բարերար Հայկ Դիդիզյանը եւ հոգելույս Հայրապետի եղբայր Զոհրապ Սարգիսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ ԶՈՐԱՎԱՐԻ ՏՈՆԸ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

Սեպտեմբերի 26-ին՝ Սուրբ Գեւորգ զորավարի հիշատակության տոնին, ուխտագնացություն կազմակերպվեց դեպի Թումանյանի շրջանի Աքորի եւ Սպիտակի տարածաշրջանի Արջահովիտ գյուղերի Սուրբ Գեւորգ եկեղեցիներ:

Իրենց աղոթքն առ Աստված հղելու էին մեկնել բազմաթիվ հավատացյալներ:

Աքորի գյուղում Պատարագին ներկա էին Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը, թեմի հոգեւոր դասը, եկեղեցու բարերար, ԱԺ պատգամավոր Կարեն Սարիբեկյանը, Ալավերդու եւ հարակից համայնքների ղեկավարներ եւ գյուղացիներ: Պատարագիչն էր Ալավերդու հոգեւոր հովիվ Տեր Միքայել քահանա Շաղոյանը: Հավարտ Պատարագի թեմական առաջնորդն իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները հղեց ուխտավորներին եւ հորդորեց Սրբի բարեխոսությունը խնդրելիս աղոթել նաեւ հայ ազգի ամբողջականության եւ հավատքի անսասանության համար, ապա Կարեն Սարիբեկյանի կողմից բաժանվեց ուխտի մատաղ:

Սպիտակի շրջանի Արջահովիտ գյուղի Սուրբ Գեւորգ եկեղեցում պատարագիչն էր Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ստեփանոս քահանա Մարգարյանը: Պատարագին մասնակցում էին Վանաձորի Սուրբ Սարգիս եկեղեցու երգչախումբը՝ խմբավարությամբ Անահիտ Ճուղուրյանի: Ներկա էին Արջահովտի գյուղապետը, Վանաձորի եւ Սպիտակի տարածաշրջանի հոգեւոր դասը, Գուգարաց թեմի Երիտասարդաց միության անդամները, ուխտագնացությունը հովանավորող ՀՄԻԿ նախագահ Գեւորգ Մանուկյանը, բազում ուխտավորներ: Հավարտ Պատարագի գյուղապետի կողմից ուխտավորներին մատուցվեց մատաղ: Օրն ավելի հիշարժան դարձավ, երբ Վանաձոր քաղաքի մի բնակչուհի, որ չցանկացավ ներկայանալ, եկեղեցուն նվիրեց Սուրբ Գեւորգի նկարը:

Այնուհետեւ Լեռնապատ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում Տեր Ստեփանոս քահանան հանդիպեց գյուղի դպրոցականների հետ եւ մանրամասն ներկայացրեց Սրբի կյանքն ու գործունեությունը:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ